



ԿԱՐԵԿՑԵԼՈՎ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՆԵԼ

Երբ հետևեք կարեկից լինելու Փրկիչի օրինակին, դուք կնկատեք, որ կարողանում եք փոխել ուրիշների կյանքը:

Կարեկցանքը ուրիշների մտահոգությունները նկատելն է և դրանք թեթևացնելու կամ օգնության հասնելու ցանկությունը: Փրկիչին հետևելու ուխտը կարեկցանքի ուխտ է «կրելու մեկդ մյուսի բեռը» (Մտախա 18.8): Ուրիշների համար հոգ տանելու հանձնարարությունը հնարավորություն է տալիս ծառայել այնպես, ինչպես Տերը կծառայեր. «ողորմեցեք խտրութիւն անելով» (Հուդա 1.22): Տերը պատվիրել է. «Ողորմութիւն ու գթութիւն արեք ամեն մեկդ իր եղբորը» (Չաքարիա 7.9):

Փրկիչի կարեկցանքը

Կարեկցանքը մղիչ ուժ է հանդիսացել Փրկիչի ծառայության համար (տես լուսանցքը. «Կարեկից Փրկիչը»): Իր մերձավորների հանդեպ Նրա ունեցած կարեկցանքը մղել է Նրան օգնության հասնել Իր շրջապատում գտնվողներին անթիվ առիթներով: Հասկանալով մարդկանց կարիքներն ու ցանկությունները՝ Նա կարողանում էր օրհնել նրանց և

ուսուցանել նրանց իրենց համար ամենանշանակալի ուղիներով: Մեր մտահոգություններից մեզ վեր բարձրացնելու Փրկիչի ցանկությունն առաջնորդեց դեպի կարեկցանքի մեծագույն արարքը՝ Նրա Քավությունը մարդկության մեղքերի և տառապանքների համար:

Մարդկանց կարիքներին արձագանքելու Նրա ունակությունը մի բան է, ինչին մենք պետք է ձգտենք, երբ ծառայում ենք: Եթե մենք արդար լինենք կյանքում և լսենք Հոգու հուշումները, ապա կոզեչնչվենք օգնության հասնել իմաստալից ուղիներով:

Կարեկից լինելու մեր ուխտը

Երկնային Հայրն ուզում է, որ իր գավակները լինեն կարեկցող (տես Ա Կորնթացիս 12.25-27): Ճշմարիտ աշակերտներ դառնալու համար մենք պետք է կարեկցանք զարգացնենք և ցուցաբերենք այն ուրիշների՝ հատկապես կարիքի մեջ գտնվողների հանդեպ (ՎևՈւ 52.40):

Մեր մկրտության ուխտի միջոցով, վերցնելով Հիսուս Քրիստոսի անունը մեզ վրա, մենք վկայում ենք, որ պատրաստ ենք կարեկցանք գործադրել: Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական Նախագահ Հենրի Բ. Այրինգն ուսուցանել է, որ Սուրբ Հոգու պարզևն օգնում է մեզ անել դա. «Դուք Հիսուս Քրիստոսի Եկեղեցու ուխտյալ անդամն եք: . . .

Այդ է պատճառը, որ դուք ցանկանում եք օգնել այն մարդուն, ով դժվարանում է վշտի և դժվարության բեռի տակ առաջ շարժվել: Դուք խոստացել եք, որ կօգնեք Տիրոջը թեթևացնել նրանց բեռը և մխիթարել նրանց: Սուրբ Հոգու պարզև ստանալուց հետո ձեզ տրվեց գործություն այդ բեռը թեթևացնելու համար»:¹

Օրինակ, Ռուսաստանում մի քրոջ ընտանիքում բարդ իրավիճակ էր, որի պատճառով նա ավելի քան մեկ տարի չէր կարողանում հաճախել եկեղեցի: Ճյուղի մեկ այլ քույր կարեկցանքով օգնության էր հասնում՝ ամեն կիրակի զանգելով նրան, որպեսզի պատմեր ելույթների, դասերի, միսիայի կոչումների, ծնված երեխաների և եկեղեցու այլ նորությունների մասին: Երբ տանը փակված քրոջ ընտանեկան իրավիճակը շտկվեց, նա այնպիսի զգացողություն ունեցավ, կարծես շարունակել էր լինել ճյուղի մի մասը՝ իր ընկերուհու ամեն շաբաթ կատարած զանգերի շնորհիվ:

ՀՂՈՒՄ

1. Հենրի Բ. Այրինգ, «Մխիթարիչը», *Lighthouse*, մայիս 2015, 18:

ՉՈՐՍ ԽՈՐՀՈՒՐԴ ԿԱՐԵԿՑԱՆՔ ԶԱՐԳԱՑՆԵԼՈՒ ՆԱՄԱՐ

Մինչ կարեկցանքը հաճախ մեծանում է, երբ մենք ունենում ենք մեր իսկ դժվարությունները, կան որոշ բաներ, որ մենք կարող ենք անել այսօր կարեկցանք զարգացնելու համար: Խորհեք ուղիների մասին, որոնցով կարող եք կիրառել այս չորս սկզբունքները:

Աղոթեք դրա համար: Երբ դուք դիմեք Երկնային Հորը, Նա կբացի ձեր սիրտը և «դուք կսկսեք անկեղծորեն մտահոգվել այլոց հավերժական բարօրության և երջանկության համար» («*Քարոզիչը իմ ավետարանը. միսիոներական աշխատանքի ուղեցույց*» [2004], 118, տես նաև Մորոնի 7.48):

Կիրառեք այն: Դուք կարող եք կարեկցանք ցուցաբերել՝ լսելով և հասկանալով: Պատկերացրեք ձեզ նրանց իրավիճակում և խորհեք, թե ինչ են նրանք զգում: Եթե իրավիճակը և ժամանակը թույլ են տալիս, կարող եք առաջարկել ձեր օգնությունը նրանց ցավը, տառապանքը կամ մտահոգությունը թեթևացնելու համար:

Հետևեք հուշումներին: Տերը կարող է հայտնությամբ մեզ ուղիներ ցույց տալ կարեկցանք ցուցաբերելու համար, որոնք մենք ինքնուրույն գուցե չկնատեինք: Երբ դուք զգաք ուրիշների օգնելու Հոգու մղումը, մի՛ հապաղեք գործի դնել այն:

Եղեք իսկական ընկեր: Կարեկցանք ցուցաբերելը կարող է լինել այնքան պարզ, որքան մարդկանց կյանքի հանդեպ անկեղծ հետաքրքրություն ցուցաբերելը: Սովորեք լավ լսել (տես «Սպասավորության սկզբունքներ. հինգ բան, որ անում են լավ լսողները», *Լիսհոնա*, հունիս 2018, 6-9): Նրանց հանդեպ ձեր սերը կմեծանա, և ավելի հեշտ կլինի նկատել ուղիները՝ այդ սերը ցուցադրելու համար:

ԿԱՐԵԿՑՈՂ ՓՐԿԻՉԸ

Խորհեք այս սուրբ գրություններից մի քանիսն ուսումնասիրելու մասին, որպեսզի տեսնեք, թե ինչպես է Հիսուս Քրիստոսի կարեկցանքը մղել Նրան բժշկելու, օրհնելու և ուսուցանելու նրանց, ովքեր Իր ծառայության ժամանակ գտնվել են Իր շուրջը. Մատթեոս 9.35–38, 14.14, 18.27, 33, 20.30–34, Մարկոս 1.40–42, 5.19, 6.30–42, 9.22, Դուկաս 7.13, 10.33, 15.20:

Սպասավորության սկզբունքները նախատեսված են օգնել մեզ, որպեսզի հոգ տանենք միմյանց մասին, ոչ թե կիսվենք դրանցով որպես ուղերձ: Երբ մենք ծանոթանում ենք նրանց հետ, ում ծառայում ենք, Սուրբ Հոգին կհուշի մեզ, որ իմանանք, թե նրանք ինչ ուղերձի կարիք ունեն՝ ի լրումն մեր հոգատարության և կարեկցանքի: